

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/2**  
**27 դեկտեմբերի 2013 թ.**

Քննարկվեց <Սի էֆ էֆ Սերվիսիս> ՓԲԸ 21.11.2013 թ-ի թիվ 05/13 գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներով հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների խախտումների վերաբերյալ 05.10.2013 թ-ի արձանագրության և հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավել վճարված գումարների (զերավճարների) հիմնավորվածության ուսումնասիրության 24.10.2013 թ-ի թիվ 2217320 արձանագրության դեմ:

**<Սի էֆ էֆ Սերվիսիս> ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.**

Հայտնում ենք, որ այն եզրահանգումը, որ <Սի էֆ էֆ Սերվիսիս> ՓԲԸ-ն չի կարող համարվել ԱԱՀ վճարող և պետք է ընդգրկվի շրջանառության հարկ վճարողների դասում, անհիմն է, չի բխում օրենքի պահանջներից և չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին: Կենտրոն ՀՏ կողմից տրված մեկնաբանությունը այն մասին, որ <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքում գործածվող <անձինք> բառը վերաբերում է բացառապես ՀՀ ռեզիդենտ համարվող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին, անտրամաբանական և անհիմն է, հետևյալ հիմնավորմամբ՝

1. <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ <<<-ում շրջանառության հարկ վճարող են համարվում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք)>:

Ինչպես նշվեց վերևում, <այսուհետ՝ անձինք> ասելով օրենսդիրը նկատի ունի շրջանառության հարկ վճարող առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողներին: Իսկ օրինակ շրջանառության հարկ չվճարողներին օրենսդիրը սահմանում չի տվել: Համաձայն այդ մեկնաբանության՝ օրենսդիրը սահմանել է, որ Օրենքում այսուհետև շրջանառության հարկ վճարող առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողներին անվանել <անձինք>: Սակայն, դա չի նշանակում, որ Օրենքում օգտագործված <անձինք> բառը վերաբերում է շրջանառության հարկ չվճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է ոչ թե շրջանառության հարկ վճարողներին, այլ հակառակը՝ շրջանառության հարկ չվճարողներին: Հետևաբար, հարկային մարմնի մեկնաբանությունը տեղին կլիներ, եթե շրջանառության հարկ չվճարողներին էլ օրենսդիրը անվաներ <անձինք>: Ասվածը հիմնավորվում է նաև Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համընդհանուր վերլուծությունից:

Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանվել են այն պայմանները, որոնց առկայության պայմաններում առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ:

Օրենսդիրը, բացի Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի այլ կետերի, 4-րդ կետում հստակ ամրագրել է երեք պայման, որի առկայության դեպքում <անձինք> չեն կարող շրջանառության հարկ վճարող համարվել: Եթե առաջնորդվենք հարկային մարմնի տրամաբանությամբ, ապա Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի <բ> և <գ> ենթակետերը, ըստ էության, նույնն են, և, որ երկու ենթակետերն էլ վերաբերվում են կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին:

2. Բացի վերոհիշյալից, Օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվում է տրված <<< ռեզիդենտ կազմակերպություններին>, նշելով, որ այդ սահմանումը անհրաժեշտ է օգտագործել <սույն օրենքի իմաստով>: Եթե օրենքում հստակ բերված է <<< ռեզիդենտ կազմակերպությունների> սահմանումը, ապա հարց է առաջանում, թե ինչու է նույն <սույն օրենքի իմաստով> սահմանումը բացակայում Օրենքում կիրառվող <անձ> և <անձանց> նկատմամբ: Միանշանակ, Օրենքի մեկնաբանությունը Կենտրոն ՀՏ-ի կողմից միակողմանի է և թերի:

3. Հաշվի առնելով «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը, շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպությունները, եթե՝ փոխկապակցված անձինք ճանաչվելու դեպքում, նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58.35 մլն դրամը: Սակայն, միայն երեք ընկերությունների ընդհանուր իրացման շրջանառությունը 2012թ.-ի ընթացքում գերազանցել է 58.35 մլն դրամը:

4. «Սի Էֆ Էֆ Սերվիսիս» ՓԲԸ-ն դիմել է Կենտրոն ՀՏ և Կենտրոն ՀՏ-ի կողմից կազմված 03.05.2013 թ-ի թիվ 2212509 արձանագրությամբ 2013 թ-ի առաջին եռամսյակի ընթացքում առաջացած 43257 ՀՀ դրամ ԱԱՀ դեբետային մնացորդը հաշվանցվել է այլ հարկատեսակի հետ: Սույն փաստը մեկ այլ հիմք է, որ ընկերությունը 2013 թ-ի սկզբից հանդիսացել է ԱԱՀ վճարող:

5. Օրենսդրության ոչ հստակ լինելու պատճառով մի շարք հարկատուների մոտ թյուրիմացություն է առաջացրել այն պահանջը, որ անհրաժեշտ է եղել տարածքային հարկային տեսչություն ներկայացնել երկու տարբեր տեսակի հայտարարություններ ԱԱՀ վճարող համարվելու համար: Այսպես, ընկերությունը բավարարվել է ՀՀ Կառավարության 04.08.2011թ. «ԱԱՀ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարությունը ներկայացնելու, այնինչ անհրաժեշտ է եղել նաև ներկայացնել «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն հայտարարությունը, որի ձևը հաստատվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով:

6. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը՝ Օրենքը պետք է մեկնաբանվի տառացի նշանակությամբ, Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը: Եթե տառացի մեկնաբանենք իրավական նորմի այդ դրույթը, ապա «այն անձին» բառակապակցությունը վերաբերում է ցանկացած անձին (ֆիզիկական կամ իրավաբանական, ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ), քանի որ եթե օրենսդիրը Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում շրջանառության հարկ վճարողներին այսուհետ անվանում է «անձինք», ապա Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետում նույնպես կգործածեր «անձինք» բառը, այլ ոչ թե «այն անձին» բառակապակցությունը, որի դեպքում էլ Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «գ» ենթակետը չէր ամրագրի: Իսկ եթե Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» և «գ» ենթակետերը հակասում են միմյանց, ապա պետք է կիրառվի մեզ համար նախընտրելի մասը, որը ամրագրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասում:

Վերջին հանգամանքը, վերոհիշյալ երեք ընկերությունների՝ որպես ԱԱՀ վճարող և որպես շրջանառության հարկ վճարող տարբեր դաշտերում դասակարգվելու և գործելու՝ վճարված հարկերի (ԱԱՀ և նվազագույն շահութահարկ՝ մեկ դեպքում և շրջանառության հարկ՝ երկրորդ դեպքում) մեծության տեսանկյունից վերլուծությունը ցույց է տալիս, որ ընկերությունները, ընդհանուր առմամբ, մոտ 6.3 մլն դրամի ավելի շատ հարկեր են վճարել որպես ԱԱՀ վճարող, քան պետք է վճարեին, քան եթե համարվեին շրջանառության հարկ վճարող:

Ելնելով վերոգրյալից՝ «Սի Էֆ Էֆ Սերվիսիս» ՓԲԸ-ն շրջանառության հարկով հարկվելու պարտավորություն չունի, քանի որ ընկերության հիմնադիր հանդիսացող անձին՝ ԱՄՆ իրավաբանական անձ Գաֆեսճեան Ընտանիքի Հիմնադրամ, Ինք.-ին (գրանցված ԱՄՆ Ֆլորիդա նահանգի պետական ղեկավարամենտի կողմից 27.12.1996թ-ին, ընկերության գրանցման վկայական՝ 96000006583) պատկանում է ՀՀ այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը: Բացի «Սի Էֆ Էֆ Սերվիսիս» ՓԲԸ-ի բաժնետոմսերից Գաֆեսճեան Ընտանիքի Հիմնադրամ, Ինք.-ը հանդիսանում է մի շարք այլ ՀՀ ռեզիդենտ ընկերությունների բաժնետոմսերի 100% սեփականատեր (մասնավորապես՝ «Կասկադ Կապիտալ Հոլդինգս» ՓԲԸ, «Մարաթոն Փրոփրթիս» ՓԲԸ, «Քեյզի Փրոփրթի» ՓԲԸ և «Էյջ Փրոփրթի» ՓԲԸ), ինչպես նաև 50 տոկոս սեփականատեր (մասնավորապես՝ «Ֆիլմ Ստուդիոս» ՓԲԸ և «Դեյվիդ Հոթսոն Ընդ Ասոսիեթս Արքիթեքթս» ՓԲԸ):

Ընկերությունը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոն ՀՏ կողմից կազմված վարչական ակտերը ընկերության նկատմամբ և անփոփոխ թողնել ընկերության՝ ԱԱՀ վճարողի կարգավիճակը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

1. Ինչ վերաբերվում է գանգատի 1-ին, 2-րդ և 6-րդ կերերով <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի դրույթների մեկնաբանմանը, նշվեց հետևյալը.

<Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանված է շրջանառության հարկ վճարողների շրջանակը: Այսպես, Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող ՀՀ ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները (այսուհետ՝ անձինք): <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը: Օրենքի 4-րդ հոդվածում օգտագործվող <անձ> հասկացությունը իրավական առումով ներառում է բացառապես առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին: Այս առումով առավել քան հստակ է, որ օրենքով <անձ> հասկացությունը վերաբերվում է ոչ թե շրջանառության հարկ վճարողներին, այլ առևտրային կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և նոտարներին:

<Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են շրջանառության հարկ վճարող չհամարվելու պայմանները, մասնավորապես 4-րդ կետի <բ> ենթակետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները, եթե առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է Հայաստանի Հանրապետության այլ ռեզիդենտ հանդիսացող առևտրային կազմակերպության կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի 20 տոկոս և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը): <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի վերը նշված հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի <բ> ենթակետը կիրառելի է այն անձանց նկատմամբ, որոնք սահմանված են հոդվածի 1-ին մասով, և կիրառելի չէ ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, ինչպես նաև ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ:

2. Գանգատի 3-րդ կետով բերված <Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի մեկնաբանման վերաբերյալ նշվեց հետևյալը.

<Շրջանառության հարկի մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված անձինք, եթե նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58,35 մլն դրամը: Այս կետի դրույթները կիրառվում են միայն ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով և վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ, իսկ ընդհանուր իրացման շրջանառության 58,35 մլն դրամը գերազանցելը համարվում է որոշման ընդունման պայման: Նշված կետի դրույթների կիրառման հետ կապված անձանց փոխկապակցված ճանաչելու կարգը սահմանվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 01.03.2013թ. <Երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա անձանց փոխկապակցված ճանաչելու կարգը սահմանելու մասին> N72-Ն հրամանով:

3. Գանգատում բերված պնդման վերաբերյալ, որ անհրաժեշտ է եղել տարածքային հարկային տեսչություն ներկայացնել երկու տարբեր տեսակի հայտարարություններ ԱԱՀ վճարող համարվելու համար, նշվեց հետևյալը.

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ

հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011թ. «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմին են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011թ. «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Հաշվի առնելով վերոգրյալը, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Քանի որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմինն ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը սակայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը օրենքի համաձայն համարվում է ԱԱՀ վճարող:

5. Ընկերության գանգատում բերված հաջորդ պնդման վերաբերյալ, որ «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն ընկերությունը շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել, քանի որ իր հետ փոխկապակցված անձանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58.35 մլն դրամը, նշվեց հետևյալը:

«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն. «Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել երրորդ անձանցից (այդ թվում՝ պետական մարմիններից) ստացված կամ օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձեռք բերված տեղեկությունների հիման վրա՝ ընդհանուր տնտեսական շահերից ելնելով համաձայնեցված գործելու հիմքով վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով բացառապես վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված անձինք, եթե նրանց ընդհանուր իրացման շրջանառությունը գերազանցում է 58,35 մլն դրամը.»:

Քննարկվող դեպքում ընկերության գանգատում նշված կազմակերպությունները վերադաս հարկային մարմնի սահմանած կարգով վերադաս հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ ընկերության հետ փոխկապակցված անձինք չեն ճանաչվել, հետևապես վերոգրյալ օրենսդրական նորմը կիրառելի չէ:

Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության կողմից սխալ է ընտրվել հարկման համապատասխան ռեժիմը, այն է՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ օրենքով նախատեսված հայտարարություն չներկայացնելու պայմաններում իրեն համարել է ԱԱՀ վճարող:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ վարչապետի մուտ 27.11.2013թ. կայացած քննարկման N23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ.

1. հարկ վճարողը օրենքով սահմանված ընթացակարգերի խախտմամբ իրեն համարել է ԱԱՀ վճարող,

2. ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների չի կատարել, դուրս չի գրել հարկային հաշիվներ (գործարքները հարկվում են ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով) և խոսք կարող է գնալ ընդամենը օրենսդրությամբ չնախատեսված ընթացակարգով ԱԱՀ-ի գերավճարների վերադարձման մասին:

Վերոգրյալ արձանագրությամբ տրված հանձնարարականը չի վերաբերվում քննարկվող դեպքին:

Հանձնաժողովի 13.12.2013 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ընկերության գանգատը մերժվել է:


Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Հիմք ընդունելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը, ինչպես նաև ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո թ ո շ ու մ է՝

<Սի էֆ էֆ Սերվիսիս> ՓԲԸ 21.11.2013 թ-ի թիվ 05/13 գրությամբ բերված գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ